ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ 2025-2026 ՈՒՍՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ՝ «ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ» ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

22.05.2026

Սիրելի՛ շրջանավարտներ

Հարգելի՛ ուսուցիչներ և ծնողներ
Այսօր շատ ջերմ օր է, օր, երբ դպրոցական տարիների հիշողությունը հանդիպում է ապագայի սպասումներին:
Մեր կրթօջախներում հնչում է վերջին դասի զանգը՝ ազդարարելով բոլորիդ համար հիշարժան փուլի ավարտը և նոր ու պատասխանատու ճանապարհի սկիզբը:
Դպրոցը միայն գիտելիքների դարբնոց չի եղել ձեզ համար. այն մի կենսական միջավայր է, որտեղ կոփվում է բնավորություն, ձևավորվում են արժեքներ, և որտեղ մեր քաղաքացին սովորում է սիրել հայրենիքն ու կրել պատասխանատվություն նրա վաղվա օրվա համար:
Շնորհավորում եմ բոլորիդ «Վերջին դասի» կապակցությամբ:
Թո՛ղ ձեր հետագա ճանապարհը լինի լուսավոր, գործունեությունը՝ իմաստուն, իսկ ձեր սիրտը՝ միշտ կապված հարազատ դպրոցի, ծննդավայրի ու հայրենիքի հետ: Մաղթում եմ, որ այդ ճանապարհին լինեք նպատակասլաց և համառ: Թո՛ղ ձեր յուրաքանչյուր քայլը լինի մտածված, իսկ հաղթանակները՝ անձնական աշխատանքի և նվիրումի արդյունք:
Մեր ջերմ շնորհակալությունը այսօր՝ ուսուցիչներին, որոնք իրենց նվիրվածությամբ, սիրով ու անսպառ ուժով ձևավորում են երեխաների աշխարհը:
Շնորհակալություն ծնողներին, քանզի դպրոցն ու ընտանիքը միասին են ստեղծում այն հիմքը, որի վրա ամրանում են աշակերտների հաջողությունները:
Սիրելի՛ շրջանավարտներ, ձեզանից ոմանք հրաժեշտի զանգը լսում են մեր մարզի նորակառույց ու հիմնանորոգված, ժամանակակից դպրոցներում՝ ավարտելով ուսումը լիովին նոր պայմաններում և կյանքի այս գեղեցիկ փուլը կապելով նոր միջավայրի, որակի և հնարավորությունների հետ:
Կան նաև դպրոցական շենքեր, որտեղ այսօր վերջին անգամ է անցկացվում «Վերջին դասը»: Հաջորդ տարի արդեն նրանց սովորողները ոտք կդնեն նոր կրթօջախներ: Այդ հրաժեշտը ևս խորհրդանշական է, քանզի շրջանավարտները տանում են տասնամյակների ջերմ հիշողությունները, իսկ մենք կառուցում ենք նորը՝ իրենց զավակների վաղվա համար:
Սիրելի՛ սյունեցի շրջանավարտներ, մենք հավատում ենք ձեզ, վստահում և սպասում ձեր հաջողություններին՝ բուհերում, մասնագիտության մեջ, աշխատանքում, առօրյա կյանքում:
Հիմա ինչ ուղի էլ ընտրեք, վերադարձե՛ք միասին շենացնելու հարազատ մարզը, որովհետև ձեր ուժերով, գիտելիքով, աշխատասիրությամբ և հայրենասիրությամբ է ծաղկելու վաղվա Սյունիքը:
Թո՛ղ ձեր ճանապարհը լինի վստահ քայլերով, արժանապատիվ և հաջողություններով լի:
Շնորհավորում եմ բոլորիդ ու բարի երթ մաղթում: